կապը, գլխի շուրջը լուսո պսակով։ Գաբրիելի պատկերը տեղ տեղ ճզմված և, համեմատաբար ավելի լավ և պահված Միքայելինը (պատկ. 89)։ Ուսերի մոտ յելընդավոր փակագրով նշանակված են հրեշտակապետների անունները, Գաբրիէլ և Միքաէլ։

Մակերևույթի զարդարանքները նույնպես գծական են, ինչպես մյուս մասերում. վոլորապտույտ արմավենիկներ, իսկ վոտքերի տակ փոխեփոխ տերևների և կոկոնների շարք, ցողունները իրար հյուսած։ Շրջանակի զարդը յերկու գծով յեղերված մի շերտ և դույգ սլաքներից կազմած կիսաշրջաններով, բացվածքը վեր կամ վար, փոխեփոխ, մեջը ծաղկով։ Այդպիսի սլաքաձև զարդարանքները ծագումով հին են Հայաստանում VII և ավելի հնագույն դարերում գործածվող քանդակագործության մեջ, իսկ այս կազմությամբ հաճախել են սկսում ԺԳ. դարում, հատկապես մանրանկարչության մեջ։

Թ.

ԱՄԻՐ-ՀԱՍԱՆ Բ. ՅԵՎ ՅԵՂԲԱՅՐՆԵՐԸ.

Եաչոյի հաջորդն եր նորա վորդին Ամիր-Հասան յերկրորդ։ Գլաձորի դպրոցի մի գրիչ՝ Սարգիս՝ յուր հիշատակարանը թվագրում է արդեն 1318 թվին Ամիր-Հասան Բ.-ի անունով. «Եւ եղեւ կատարումն գրոցս ի թվ. ՉԿԷ։ Ի գաւառիս Վայոց ձորոյ յանապատս Գլաձոր, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփանոսի... եւ յիշխանութեան գաւառիս Ամիրհասանայ որդոյ Իաչէ որդոյ Ամիրհասանայ վորդոյ Պռոշայ բարեպաշտի»*։ Եաչի Պռոշյանի մահը և նորա վորդու հաջորդությունը յեղել է, ուրեմն, 1318 թ. նավասարդից առաջ, ինչպես տեսանք Հակոբ Թագորցու հիշատակարանից (եջ. 188. Հավել. Բ. 22)։ Նույն դպրոցի մի ուրիշ գրիչ՝ Կյուրեղ Սարկավագ՝ 1321 թվին, «Ի թվաբերութեան մերոյս հայկազեան տումարի ՉՀ». յուր գրած մագաղաթյա ավետարանի հիշատակարանը թվագրում է ի միջի այլոց և Ամիր-Հասանի անունով. «Ի զորավարութեան և իշխանութեան գաւառացս յորում եմք Բուրթելի և Ամիրհասանայ» (Հավել. Բ. 23)**։ Այստեղ հիշատակված Բուրթելը՝ Յելիկում Որբելյանի վորդին է, Ստեփաննոս Որբելյանի յեղբոր վորդին, իսկ Ամիր-Հասանը Եաչոյի վորդին։ Բայց շատ ավելի ընդարձակ և կարևոր տեղեկություններ. ենք ստանում Ամիր-Հասանի, յուրայինների, ինչպես և նրանց դեպի Գլաձորի դպրոցն ունեցած հարաբերության մասին, Առաքել Հաղբատեցու մի հիշատակարանից, գրված 1328 թվին, «Ի վանս Գլաձոր, յոր կոչի Աղբերց վանք» Դաւիթ Գետկեցու ձեռքով։ Հիշատակարանը Գլաձորի դպրոցի, նորա վարդապետների և Որբելյան իշխանների մասին տեղեկություն տալուց զատ՝ խոսում է նաև Խաղբակյան տան իշխանների մասին.

«Դարձեալ յեռեալ հիւսեսցի ընդ յիշատակ... յիշման արժանաւոր ծնողաց զաւակքն՝ ի քաջ և արիական ազգէ սերեալ ծնունդքն՝ Խաղբակեանցն Պռոշայ և իւրոցն, որք են ժառանգ հայրենի տանն իւրեանց, զհեզահոգի և զողջախոհն (s!) Ամիր Հասան, և զքաջն և զարին հոլովն Վասակ, և զկորովամիտն Ամիր Ասաթն, և զտիրոք մանուկն՝ զխայտակն և զքաջագանգուրն Զում, որք են տէր և իշխեցող սուրբ մենաստանիս և տանս դպրոցական ժողովելոց, որոց տացէ տէր Աստուած զբաղտ և զանուն քաջութեան նախահարցն իւրեանց և յիշատակ նոցա օրհնութեամբ եղիցի» (Հավել. Բ. 24)։

Եջմիածնի մատենադարանի № 734 խառն գրչությամբ ձեռագրի մեջ մի հատակոտոր (Fragment) կա, ամենայն հավանականությամբ Գլաձորի դպրոցականներից մեկի աշխատության մաս, վորի վերջաբանությունը բարեմաղթություն է Խաղբակյանց կամ Պռոշեանց տոհմի ժամանակակից իշխանների՝ Ամիր-Հասանի և նրա յեղբայրների հասցեյին. «Արդ ահեսցէ տրն տէրանց և իշխեցելոցն իշխանն զծիրանայծին և զծիրանայծաղիկ զմանկագոյն իշխանն մեր, որ տայրն (s!) է տեղոյս և փառք ազգին (իւրո?)յ... և ի բարձր տոհմիցն Խաղբակեցն Վասակայ և Պ(ռոշ)եցն Հասանայ ազնուագոյնին և հսկայաձևին Էաչոյ և ի յոգնայշաւիղ և ի բազմոստեն տնկոցն տատմա... (յերկու կամ յերեք տառ պակաս) բարձրելոյն ի մի իմն եկել համեղութի քաղցրորակ պաղ(ուք?) ի ծայրս երկայնահաս տնկոյն ի վերջնում ժամանակիս (մե[ծ])աւ հրաշիւք սերեցան զվարճական խնդութի և փառ(ք) ազգին իւրենց և երկրորդ արբահայմու հաւատոյն համաքատակի. և չորրորդ եղեն որդիք, չորրորդ հա(ւ)ոյն իւրենց Վասակայ, իբր եղանակաց չորից առ վերջնովքն առին բոլորել զաւրութե ծնունդ. ընդարձակեսցէ ած ի տան Ասաղին և Զումային։ և եղիցին այլազգիքն ծառայք նոցայ. լվիցէ տր ձայնի նոցայ և ի ժողովուրդ(ս) նոցայ բնակեսցէ ած և ձեռք նոցայ ընտրեսցեն... այ և աւգնական ի թշնամեց եղիցի նոցա. Ահնեսցէ տր զօրութիս նոցայ և ընկալցի զգործս նոցայ. խորտակեսցէ զմէջս ի վերայ յարուցելոց թշնամեց նոցա և առելիք նոցայ մի կանկնեսցին. և սիրեցել լիցին նոքա ի տէ և ած հովանի եղիցի նոցայ

* Н. Марр. Сборник притч Вардана. I. յեր. 459/60։

** A. Catalogue of the Armenian Manuscripts in the Britisch Museum by Frederick Cornwallis Conybeare. London 1913. 22.